Նախագահ
Թոմաս Ս. Մոնսոն



Հոգեպես պատրաստվենք

Մեր մարգարեի խորհուրդը

Հավատքի հիմք

«Եթե չունենք հավատքի խորը հիմք և ճշմարտության մասին ամուր վկայություն, մենք, հնարավոր է, դժվարանանք դիմակայել դժբախտության խստաշունչ փոթորիկներին և սառը քամիներին, որոնք անխուսափելիորեն հարվածում են բոլորիս։

Մահկանացու կյանքը փորձվելու ժամանակ է, ժամանակ՝ հաստատելու, որ արժանի ենք մեր Երկնային Հոր ներկայություն վերադառնալուն։ Որպեսզի փորձվենք, պետք է դժվարությունների հանդիպենք։ Դրանք կարող են կոտրել մեզ և մեր հոգու մակերեսը կարող է ճաք տալ և ճեղքվել, դա այն դեպքում, եթե մեր հավատքի հիմքը և ճշմարտության մասին մեր վկայությունները խորը չեն նստել մեր մեջ»։[1]

Սովորենք անցյալի դասերից

«Լավագույնը դառնալու մեր փնտրտուքներում, բազմաթիվ հարցեր կարող են մեզ ուղեկցել. Արդյո՞ք այն եմ, ինչ ուզում եմ լինել։ Արդյո՞ք ավելի մոտ եմ Փրկչին այսօր, քան երեկ էի։ Իսկ վաղն ավելի մոտ կլինե՞մ։ Ունե՞մ ավելի լավը դառնալու քաջություն։ . . .

Տարիները գալիս ու գնում են, սակայն ավետարանի մասին վկայության կարիքը հարատև է։ Գնալով դեպի ապագա, մենք չպետք է անտեսենք անցյալի դասերը»։[2]

Ձեր անձնական Լիահոնան

«Ձեր հայրապետական օրհնությունը ձերն է և միայն ձերը։ Այն կարող է լինել հակիրճ կամ երկար, հասարակ կամ խորիմաստ։ Երկարությամբ և լեզվով չի կարևորվում հայրապետական օրհնությունը։ Հոգին է հաղորդում իրական իմաստը։ Ձեր օրհնությունը չպետք է ծալել և պահել։ Այն չպետք է շրջանակի մեջ առած աչքի ընկնող տեղում դնել կամ հրապարակել։ Այլ այն պետք է կարդալ։ Այն պետք է սիրել։ Դրան պետք է հետևել։ Ձեր հայրապետական օրհնությունը կառաջնորդի ձեզ մութ գիշերը։ Այն կուղեկցի ձեզ կյանքի դժվարությունների ժամանակ։ . . . Ձեր հայրապետական օրհնությունը ձեր անձնական Լիահոնան է, որը կգծի ձեր ուղին և կլինի ձեր ուղեկիցը։ . . .

«Համբերություն է պետք, երբ նայում, սպասում և աշխատում ենք խոստացված օրհնության ուղղությամբ»։[3]

Եկեք Նրա մոտ

«Հիշեք, որ դուք միայնակ չեք քայլում: . . . Կյանքի ճանապարհով քայլելիս, միշտ քայլեք դեպի լույսը, և կյանքի ստվերները ձեր ետևում կմնան: . . .

Երբ դիմել եմ սուրբ գրություններին՝ ոգեշնչում փնտրելով, մի հատուկ բառ է բազմիցս առանձնացել: Այդ բառն է՝ եկեք: Տերն ասել է. «Ինձ մոտ եկեք»: Նա ասել է. «Ինձանից սովորեցեք»: Նա նաև ասել է. «Եկ հետևիր ինձ»: Ես սիրում եմ այդ բառը՝ *եկեք:* Իմ աղերսն է, որ դուք գաք Տիրոջ մոտ»:[4]

Հղումներ

1. "How Firm a Foundation," *Liahona,* Nov. 2006, 62.
2. "Becoming Our Best Selves," *Liahona,* Apr. 2006, 3, 5.
3. "Your Patriarchal Blessing: A Liahona of Light," *Ensign,* Nov. 1986, 66.
4. 16-stake fireside, Brigham Young University, Nov. 16, 1986.

Ուսուցանեք այս ուղերձից

Teaching, No Greater Call սահմանում է. «Լմուտ ուսուցիչը չի մտածում. . . . «Ի՞նչ եմ սովորեցնելու այսօր», այլ մտածում է. «Ինչպե՞ս օգնեմ իմ ուսանողներին պարզել, թե ինչ է իրենց անհրաժեշտ իմանալ» ([1999], 61): Այս ուղերձից ուսուցանելու համար կարող եք նրանց, ում ուսուցանում եք, թուղթ ու մատիտ տալ և ժամանակ տրամադրել, որպեսզի կարդան Նախագահ Մոնսոնի խոսքերը և գրեն իրենց հայտնաբերած ճշմարտությունները, որոնք անհրաժեշտ են հոգևոր պատրաստվածություն ձեռք բերելու համար: Փոքր երեխաները կարող են նկարներ նկարել իրենց սովորածի վերաբերյալ: Խնդրեք նրանց կիսվել իրենց գրածով կամ նկարածով:

Երիտասարդներ

Ձեր հայրապետական օրհնությունը

Նախագահ Մոնսոնը հայրապետական օրհնությունը նկարագրել է որպես «անձնական Լիահոնա, որը կգծի ձեր ուղին և ցույց կտա ճանապարհը»: Այսպիսով, ի՞նչ է այդ օրհնությունը և ինչպես կարող է այն ուղղորդել ձեր կյանքը:

Ի՞նչ է հայրապետական օրհնությունը:

Ձեր օրհնությունն ունի երկու նպատակ: Առաջինը, այն հայտնում է ձեր տոհմագիծը, կամ թե Իսրայելի տան որ ցեղին եք պատկանում: Երկրորդ, այն պարունակում է տեղեկություն, որը կուղղորդի ձեզ: Ձեր օրհնությունը հավանաբար կպարունակի խոստումներ, հորդորներ և զգուշացումներ:

Ի՞նչ տարիքում պետք է ես ստանամ իմ օրհնությունը:

Դրա համար սահմանված տարիք գոյություն չունի, սակայն դուք պետք է այնքան հասուն լինեք, որպեսզի գնահատեք այդ օրհնության սուրբ բնույթը: Շատ անդամներ դեռ վաղ պատանեկության տարիքից սկսում են մտածել իրենց օրհնությունը ստանալու մասին:

Ինչպե՞ս կարող եմ ստանալ օրհնությունը:

Սկզբում զրուցեք ձեր եպիսկոպոսի կամ ճյուղի նախագահի հետ: Եթե պատրաստ եք և արժանի, դուք երաշխավորագիր կստանաք: Դրանից հետո, դուք կարող եք պայմանավորվածություն ձեռք բերել ձեր տարածքի հայրապետի հետ:

Ի՞նչ պետք է անեմ իմ օրհնության հետ:

Պահեք այն ապահով տեղում և հաճախակի կարդացեք: Հիշեք. ձեր օրհնությունը սուրբ է և անձնական: Դուք կարող եք անմիջապես կիսվել դրանով ընտանիքի անդամների հետ, սակայն չպետք է հրապարակավ կիսվեք ձեր օրհնությամբ: Ինչպես նաև, ձեր հայրապետական օրհնության մեջ նշված բոլոր օրհնությունները հիմնվում են ձեր հավատարմության և Տիրոջ ժամանակի վրա:

Երեխաներ

Ամուր հիմք

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնն ասել է, որ մենք պետք է «ճշմարտության մասին ամուր վկայություն» կառուցենք: Դա անելու լավագույն միջոցը սուրբ գրությունները կարդալն է: Ուշադրություն դարձրեք ստորև տրված հատվածներին: Գրեք յուրաքանչյուր հատվածից սովորած մի բան, որը կօգնի ձեր վկայության ամրապնդմանը:

Մորոնի 7.5
Հավատո Հանգանակներ 1.10
Մորոնի 10.5
ՎևՈ 11.12
Մորոնի 7.41
ՎևՈ 1.37
Եփեսացիս Զ.11

© 2009 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները պաշտպանված են: Printed in USA. Անգլերենի հաստատումը. 6/09: Թարգմանության հաստատումը. 6/09: *First Presidency Message, February 2010* -ի թարգմանությունը: Armenian 09362 201

Միջոցները իմաստուն տնօրինել և պարտքից խուսափել

Աղոթքով ուսուցանեք այս սուրբ գրություններն ու ելույթները կամ, անհրաժեշտության դեպքում, ուսուցանեք մեկ այլ սկզբունք, որը կօրինի այն քույրերին, որոնց դուք այցելում եք: Վկայություն բերեք վարդապետության մասին: Նրանց, ում ուսուցանում եք, հրավիրեք կիսվել իրենց զգացմունքներով և սովորածով:

Միջոցները տնօրինել

«Խնայողաբար ապրել . . . նշանակում է տնտեսել մեր միջոցները, ֆինանսական գործերը խելամտորեն պլանավորել, անձնական առողջության համար լիովին ապահովագրվել, բավարար չափով պատրաստվել կրթական և մասնագիտական զարգացմանը, պատշաճ ուշադրություն հատկացնել մթերմանը և պահեստավորմանը, ինչպես նաև էմոցիոնալ ճկունություն զարգացնել: . . . Եթե մենք խելամտորեն և խնայողաբար ապրենք, մենք այնքան ապահով կլինենք, ինչպես Նրա ափի մեջ»:[1]

Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալ (1895–1985):

Ինչպիսի՞ ունակություններ են մեզ անհրաժեշտ ինքնապահովող դառնալու համար: . . . Եկեղեցու վաղ օրերին Բրիգամ Յանգը աղերսում էր քույրերին սովորել, ինչպես կանխել հիվանդությունը ընտանիքում, տնային արտադրություն հաստատել, սովորել հաշվապահություն և այլ կիրառական հմտություններ: Այս սկզբունքներն այսօր ևս կարևոր են: Կրթությունը շարունակում է կարևորվել: . . .

«Ես մի քանի եպիսկոպոսների հարցրել եմ, թե իրենց ծխերում քույրերը հիմնականում ինքնապահովման ի՞նչ ունակությունների կարիք ունեն, և նրանք պատասխանել են՝ բյուջե կազմելու: Կանայք պետք է հասկանան ապառիկով գնելու և ըստ բյուջեի չապրելու վտանգը: Երկրորդ ունակությունը, որ եպիսկոպոսները նշել էին, դա խոհարարությունն էր: Տանը պատրաստված սնունդը հիմնականում ավելի էժան է և առողջարար, և նպաստում է ավելի ամուր ընտանեկան հարաբերությունների հաստատմանը:[2]

Ջուլի Բ. Բեք, Սփոփող Միության գերագույն նախագահ:

Խուսափեք պարտքից

«Թույլ տվեք առաջարկել ֆինանսական ազատություն տանող հինգ կարևոր քայլեր: . . .

Առաջինը, վճարեք ձեր տասանորդը: . . .

Երկրորդ, ծախսեք ավելի քիչ, քան վաստակում եք: . . .

Երրորդ, սովորեք խնայել: . . .

Չորրորդ, ժամանակին վճարեք ձեր ֆինանսական պարտավորությունները: . . .

Հինգերորդ, սովորեցրեք ձեր երեխաներին հետևել ձեր օրինակին:»:[3]

Երեց Ջոզեֆ Բ. Վիրթլին (1917–2008), Տասներկու Առաքյալների Քվորումից:

«Երբ պարտք ենք վերցնում, մենք կորցնում ենք մեր թանկարժեք, անգին ազատության մի մասը և մեզ դնում ենք

Օգնություն Այցելող Ուսուցիչներին

Ձեր ընկերակցի հետ խորհրդակցեք, թե ինչպես պետք է այս ուղերձը նրբանկատորեն համապատասխանեցնեք յուրաքանչյուր քրոջ կարիքներին: Ինքնապահովման ի՞նչ ունակություններով կարող եք կիսվել նրա հետ:

Անձնական պատրաստվածություն

Մաղաքիա Գ.10
Մատթեոս Ջ.19–21
Ղուկաս ԺԲ.15
ՎևՈւ 38.30; 88.119

Լրացուցիչ տեղեկության համար, տես *All Is Safely Gathered In: Family Finances* (item no. 04007):

կախվածության մեջ: Մենք տրամադրում ենք մեր ժամանակը, եռանդը և միջոցները, որպեսզի վերադարձնենք մեր պարտքը, մինչդեռ այդ միջոցները կարող էինք օգտագործել մեր, մեր ընտանիքի և մյուսների համար: . . .

Մեր պարտքերը այժմ վճարելու և ապագայում պարտքից խուսափելու համար, մենք պետք է հավատք գործադրենք Փրկչի հանդեպ, ոչ թե պարզապես ավելի լավ *գործելու,* այլև ավելի լավը *լինելու* համար: Մեծ հավատք է պահանջվում այս պարզ խոսքերն ասելու համար. «Մենք միջոց չունենք դրա համար»: Հավատք է պահանջվում վստահելու համար, որ կյանքը կբարելավվի, եթե մենք զոհաբերենք մեր ցանկությունները մեր և մյուսների կարիքները բավարարելու համար»:[4]

Երեց Ռոբերտ Դ. Հեյլս՝ Տասներկու Առաքյալների Քվորումից:

Հղումներ

1. “Welfare Services: The Gospel in Action,” *Ensign,* Nov. 1977, 78.
2. “The Welfare Responsibilities of the Relief Society President,” *Basic Principles of Welfare and Self-Reliance* (2009), 5.
3. “Earthly Debts, Heavenly Debts,” *Liahona,* May 2004, 41, 42.
4. “A Gospel Vision of Welfare: Faith in Action,” *Basic Principles of Welfare and Self-Reliance* (2009), 1.

© 2009 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները պաշտպանված են: Printed in USA. Անգլերենի հաստատումը. 6/09: Թարգմանության հաստատումը. 6/09: *Visiting Teaching Message, February 2010* -ի թարգմանությունը: Armenian 09362 201